

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/6

9 մարտի 2016 թ.

Քննարկվեց քաղաքացի Անուշ Նիկոլայանի 09.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 13.01.2016թ-ի թիվ 308567/02 և 01.02.2016թ-ի թիվ 312849/02 որոշումների դեմ:

Քաղաքացի Անուշ Նիկոլայանի գանգատում բերված փաստարկները.

Անուշ Նիկոլայանը հայտնում է, որ հանդիսանում է «Հայ Դատ» հիմնադրամ, «Հրայր Մարության» հիմնադրամ, «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտ. հետ. հիմնադրամ, «ՀՅԴ պատմության թանգարան» հիմնադրամ և «Վէմ հանդես» ՍՊԸ-ի էլեկտրոնային հաշվետվությունների միակ ստորագրողը: Վերը նշված կազմակերպությունների 2015թ. հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվետվությունները Անուշ Նիկոլայանը հանձնել է սահմանված ժամկետից մի քանի ժամ ուշացումով և ներկայանալով Կենտրոնի ՀՏ ընդունել է իր կողմից կատարված իրավախախտումը:

2015թ. դեկտեմբերին դիմում է ներկայացրել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետին՝ բացատրելով, որ իրավախախտման պատճառ է հանդիսացել հանկարծակի ի հայտ եկած առողջական խնդիրը՝ վիրահատական լուծումով (անաշխատունակության թերթիկ AKN1081718) և խնդրել է իրեն չենթարկել վարչական տույժի: Սակայն, 3 կազմակերպությունների համար ՀՀ ՖՆ ԻՎ պետի 13.01.2016թ. թիվ 308567/02 որոշմամբ ենթարկվել է 20.000 դրամ տուգանքի և մյուս 2 կազմակերպությունների համար 01.02.2016թ. թիվ 312849/02 որոշմամբ ևս ենթարկվել է 20.000 դրամ տուգանքի:

Անուշ Նիկոլայանը գտնում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն, պետք է նշանակվեր միայն մեկ առավելագույն չափի վարչական տուգանք՝ 20.000 դրամի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ Անուշ Նիկոլայանը խնդրում է վերանայել իր հանդեպ կիրառված վարչական տուգանքները:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն գիտահետազոտական հիմնադրամ» և «Հրայր Մարության» ՍՊԸ-ների կողմից 2015թ. հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկները սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու համար ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 13.01.2016թ-ի թիվ 308567/02 որոշմամբ Անուշ Նիկոլայանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով: Այնուհետև, «ՀՅԴ պատմության թանգարան» և «Վէմ հանդես» ՍՊԸ-ների կողմից 2015թ. հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկները սահմանված ժամկետից ուշ ներկայանալու համար ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 01.02.2016թ-ի թիվ 312849/02 որոշմամբ Անուշ Նիկոլայանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 01.02.2016թ-ի թիվ 312849/02 որոշումն ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ

օրենսգրքով նախատեսված պահանջների խախտմամբ: Այսպես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 01.02.2016թ-ի թիվ 312849/02 որոշմամբ Անուշ Նիկոլայանը վարչական պատասխանատվության է ենթարկվել 2015թ-ի հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի ամսական ամփոփ հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու համար:

Հարկ է նշել, որ «եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի ամփոփ հաշվարկ:

Քննարկվող դեպքում 2015թ-ի հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի ամսական ամփոփ հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու համար Անուշ Նիկոլայանը վարչական տույժի է ենթարկվել 01.02.2016թ-ին, այն դեպքում, երբ խախտումը նրա կողմից թույլ է տրվել 2015թ-ի նոյեմբերի 21-ին: Այսինքն, վարչական տույժը նշանակվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ, այն է՝ իրավախախտումը կատարվելու օրվանից երկու ամիս հետո ընկած ժամանակահատվածում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 01.02.2016թ-ի թիվ 312849/02 որոշումը ենթակա է բեկանման:

Ինչ վերաբերվում է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 13.01.2016թ-ի թիվ 308567/02 որոշմանը, ապա այն կազմված է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 01.02.2016թ-ի թիվ 312849/02 որոշումը, իսկ գործը (այդ մասով)՝ կարճել:

2. ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 13.01.2016թ-ի թիվ 308567/02 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը (այդ մասով)՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

